

ՁՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԿԵՐՆՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԲԱՅԱՍԱԿԱՆ
ՆԵՐԹԱՓՈՆՑՄԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ
ԼԵԶԿԻ (ԱՆԳԼԵՐԵՆԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՀԻՄԱՆ ԿՐԱ)
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀՀ մասնագիտական բուհերում որպես երկրորդ օտար լեզու սովորա-բար դասավանդվում է այնպիսի լեզու, որը մոտ է առաջին օտար լեզվին և պատկանում է նույն լեզվախմբին: Սա զգալիորեն հեշտացնում է երկրորդ օտար լեզվի յուրացումը, բարձրացնում ուսուցման արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս դասավանդման փորձը, ի հայտ են գալիս բացասական ներթափանցման երևույթներ, որոնք առաջացնում են դժվարու-թյուններ երկրորդ օտար լեզվին տիրապետելու ընթացքում: Հատկապես դժվար են բարդ քերականական երևույթները, որոնք շատ կարևոր են ասույթի ճիշտ ձևավորման և ընկալման համար: Այդ երևույթների յուրացման ընթացքում ուսանողները կատարում են տիպական սխալներ, որոնք մեծ մասամբ լեզուների բացասական ներթափանցման արդյունք են:

Մայրենի կամ մի այլ լեզվի բացասական ազդեցությունը կարելի է վերացնել երկու ճանապարհով՝ կամ ձեռք բերած լեզվական փորձով, կամ գիտակցելով լեզուներում առկա տարբերությունները [Վ.Գակ, 1979], որոնց բացահայտումը ենթադրում է համեմատական-զուգահղրական մեթոդի կիրառում, որն էլ ուղղված է վեր հանելու զուգահղրվող լեզուներում գոյություն ունեցող համընկնող և չհամընկնող փաստերը [Ի.Ս. Սոլովյովա, 1976]:

Սույն աշխատանքում նպատակադրվում ենք զուգահղրական մեթոդի կիրառմամբ քննել անգլերենի Past Indefinite և Present Perfect ժամանակաձևերի յուրահատկությունները հայերենում և գերմաներենում:

Նշված ժամանակաձևերի ընտրությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ դրանք լայն կիրառություն ունեն անգլերեն բանավոր և գրավոր հաղորդակցման մեջ և տարբերվում են հայերենի և գերմաներենի ժամանակային ձևերից իրենց բազմազանությամբ ու կիրառման յուրահատկությամբ, որը հատկապես վառ է արտահայտված բայի սահմանական եղանակում:

Վերլուծության նպատակն է ի հայտ բերել ուսումնասիրվող լեզուներում վերոհիշյալ ժամանակաձևերի համընկնող, մասնակի համընկնող և չհամընկ-

նող փաստերը: Հենց այս ուղղվածությունն էլ ապահովում է համեմատական-զուգահեռական ուսումնասիրության սերտ կապը լեզուների ուսուցման և ուսումնառության հետ: Այն ունի կարևոր գործնական նշանակություն և նրա նպատակն է ուսումնասիրել օտար լեզուները մայրենի լեզվի հիմքի վրա:

Ինչպես ամեն մի համեմատական-զուգահեռական քննության մեջ, մեր ուսումնասիրության համար նույնպես էապես կարևոր է համարվել պարզաբանել ընտրված լեզուների բնույթը, դրանց յուրահատկությունները և մեր կողմից ընտրվող հետազոտական մոտեցումը (բովանդակությունից դեպի ձև, թե՞ ձևից դեպի բովանդակություն), ինչպես նաև ճշտել ուսումնասիրության առարկան, այսինքն՝ քերականական մակարդակի կարևորագույն միավորներից մեկը՝ ժամանակի քերականական կարգը [Մ.Մ. Գուխման, 1966]:

Այս աշխատանքում որպես ելակետային լեզու ընտրվել է անգլերենը, քանզի հենց անգլերենն է համդիսանում մեր ուսուցման առարկան: Քերականական երևույթները համեմատելիս որպես հիմք ընդունվել է իմաստի վերլուծությունից դեպի ձև մոտեցումը: Այս մոտեցումն ըստ լեզվաբանների [Ա.Ա.Ցարցևա, 1966] և հոգելեզվաբանների [Ա.Ա. Լեոնտև, 1965] տվյալների, հատկապես բնորոշ է մտքերի բանավոր և գրավոր արտահայտման կարողությունների զարգացման համար: Առաջնություն տալով այդ մոտեցմանը, մենք հաշվի ենք առնում նաև ուսումնասիրվող լեզվական երևույթների ձևը:

Ուշագրավ է, որ զուգահեռական վերլուծություն կատարելու ընթացքում գրեթե բոլոր լեզվաբանները նշում են երեք տիպի դժվարություններ.

ա. մայրենի լեզվի այս կամ այն կարգի բացակայությունը ուսումնասիրվող լեզվում, որն էլ կարող է անհրաժեշտություն ստեղծել դրանց իմաստները այս կամ այն կերպ փոխանցելու համար ,

բ. մայրենի լեզվում այս կամ այն կարգի բացակայությունը ուսումնասիրվող լեզվում ,

գ. երկու լեզուներում միևնույն կարգերի առկայությունը, որոնք տարբերվում են միմյանցից ներքին եզրերով և գործառության ոլորտով:

Անգլերենի, գերմաներենի և հայերենի, բայական համակարգերի զուգահեռությունը, մասնավորապես բայական ժամանակաձևերի իմաստակառուցվածքային վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ

• անգլերենի բայական համակարգում և հատկապես քննության առարկա ժամանակաձևերի մեջ գերակշռող տեղ են զբաղեցնում վերլուծական ձևերը,

մինչդեռ հայերենում թեքական ձևերի գերակայությունը թույլ է տալիս որակել այն որպես համադրական լեզու: Գերմաներենում, այս առումով, պահպանվում է կցական և վերլուծական ձևերի հավասարակշռություն,

- հայերենի և անգլերենի բայի համակարգում ունենք նույն քերականական կարգերը: Գերմաներենում բայի համակարգում պակասում է կերպի քերականական կարգը, որն արտահայտվում է բառային միջոցներով ,
- զուգադրվող երեք լեզուներում ժամանակային ձևերի դասակարգումը ուղղակիորեն ելնում է խոսելու պահի հաշվառման սկզբունքից ,
- անգլերենում բայի ժամանակային ձևերը կազմվում են 4 հիմքերից՝ Infinitive, Past Indefinite, Past Participle, Present Participle: Գերմաներենում բայի բոլոր ժամանակային ձևերը կազմվում են երեք հիմնական ձևերից (drei Grundformen des Verb), դրանք են՝ Infinitiv, Imperfekt, Partizip II: Հայերենի կախյալ, այսինքն, դիմավոր ձևեր ստեղծող դերբայներն են՝ անկատարը, վաղակատարը, ապառնիմ /կատարելի/ և ժխտականը: Առաջին երեքը դիմավոր ձևեր են ստեղծում սահմանական եղանակի համակարգում, իսկ վերջինը՝ ենթադրական:

Անգլերենի, հայերենի, գերմաներենի բայական ժամանակաձևերի զուգադրական վերլուծության (Past Indefinite և Present Perfect ժամանակաձևերի նյութի հիման վրա) արդյունքում բացահայտվել են նշված կառուցվածքների նմանություններն ու տարբերությունները երեք լեզուներում: Անգլերենի բայի Past Indefinite ժամանակաձևին հայերենում համապատասխանում են անցյալ անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակաձևերը: Present Perfect ժամանակաձևին հայերենում համապատասխանում են վաղակատար, անցյալ վաղակատար, անցյալ կատարյալ և ներկա ժամանակաձևերը: Գերմաներենում անգլերենի Past Indefinite ժամանակաձևին համապատասխանում են Imperfekt, Perfekt և Plusquamperfekt ժամանակաձևերը: Անգլերենի Present Perfect ժամանակաձևին գերմաներենում համապատասխանում են Perfekt և Imperfekt ժամանակաձևերը:

Իմաստային մակարդակում նմանությունների և տարբերությունների քննությունը ցույց է տալիս, որ Past Indefinite-ը համարժեք է Imperfekt-ին այն դեպքում, երբ վերջինս արտահայտում է անցյալում կատարված, իրար հաջորդած գործողություններ: Օրինակ՝ He did his homework and then went for a walk

In the park. Er machte seine Hausarbeit, dann ging er in die Allee spazieren. Եւ կատարեց իր տնային աշխատանքը. իսկ հետո գնաց պուրակում զբոսնելու:

Անգլերենում երկխոսության մեջ կարող է գործածվել և՛ Past Indefinite (եթե գործողության կատարման ժամանակը հայտնի է, կամ հասկացվում է), և՛ Present Perfect (եթե գործողության կատարման ժամանակը հայտնի չէ, կամ եական չէ):

Գերմաներեն լեզվում մեմախոսության մեջ գործածվում են Imperfekt, իսկ երկխոսության մեջ՝ Perfekt ձևերը: Եթե երկխոսության մեջ խոսքը գնում է մոտ անցյալի մասին, ապա գործածվում է Perfekt, իսկ եթե նկատի է առնվում հեռավոր անցյալը, ապա գործածվում է Plusquamperfekt: Օրինակ՝ Yesterday Mary helped us to type the letters. Gestern hat uns Mary geholfen diese Briefe zu tippen. Երեկ Սերին մեզ օգնեց մեքենագրել նամակները: Peter's mother taught them French last year. Peter's Mutter hatte ihnen in vorigen Jahr Französisch unterrichtet. Պիտերի մայրը նրանց ֆրանսերեն էր դասավանդում անցյալ տարի:

Անգլերենում անցյալ ժամանակի մակբայների հետ գործածվում է Past Indefinite, մինչդեռ գերմաներենում նույն իրադրության մեջ թույլատրելի են և՛ Imperfekt, և՛ Perfekt, և՛ Plusquamperfekt ժամանակաձևերը: Հայերենն այս առումով ընդհանրություններ ունի գերմաներենի հետ:

Կառուցվածքային մակարդակի քննությամբ բացահայտվում է , որ

- և՛ անգլերենում, և՛ գերմաներենում գոյություն ունեն կանոնավոր և անկանոն բայեր,
- երկու լեզուներում էլ Past Indefinite և Imperfekt ժամանակաձևերը կազմվում են համապատասխանաբար Past Indefinite և Imperfekt հիմքերից,
- վերոհիշյալ երկու ժամանակաձևերն էլ համադրական ժամանակաձևեր են,
 - Present Perfect-ը և Perfekt-ը վերլուծական ժամանակաձևեր են:

Այս ժամանակաձևերի կազմությունը մասամբ է համընկնում: Գերմաներենում, շարժում արտահայտող բայերի խոնարհված ձևերում, Partizip II-ի հետ haben օժանդակ բայի փոխարեն գործածվում է sein օժանդակ բայը: Տարբերություններ կան haben / sein+Partizip II և have+ Participle II կառուցվածքներում Partizip II-ի և Participle II -ի շարահյուսական դիրքի առումով:

Հայերենում նույնպես հանդիպում են ունենալ բայով և հարակատար դերբայով կազմված կառուցվածքներ, սակայն դրանք ավելի շատ գործածվում են խոսակցական լեզվում և բարբառներում: Օրինակ՝ ես դա մոտոս գրած ունեմ:

- Տարբերություններ կան հարցական ձևի կազմության մեջ :

Անգլերենում Past Indefinite ժամանակաձևում պարզ բայական ստորոգյալի դեպքում հարցական ձևը կազմվում է ներմուծվող did օժանդակ բայով, որը դրվում է ենթակայից առաջ: Գերմաներենում հարցական ձևը կազմվում է շարահասության փոփոխությամբ՝ ստորոգյալը դրվում է ենթակայից առաջ: Հայերենում հարցական ձևը կազմվում է հնչերանգի միջոցով: Օրինակ՝ Did Tom's elder brother work at the factory ten years ago? Arbeitete Tom's Դltester Bruder vor zwei Jahren in der Fabrik? Թոմի ավագ եղբայրը աշխատո՞ւմ էր ֆաբրիկայում երկու տարի առաջ:

Գերմաներենում և անգլերենում հարցական ձևի կազմության նմանություն կա բաղադրյալ անվանական ստորոգյալների դեպքում, երբ հարցական ձևը երկու լեզուներում էլ կազմվում է օժանդակ բայի միջոցով: Օրինակ՝ The weather was fine yesterday. Was the weather fine yesterday? Das Wetter war gestern schön. War das Wetter gestern schön?

- Անգլերենում պարզ բայական ստորոգյալների դեպքում ժխտական ձևը կազմելիս not ժխտական մասնիկը ավելանում է օժանդակ բային, իսկ գերմաներենում nicht-ը ավելանում է հենց ստորոգյալին: Օրինակ՝ Tom's elder brother did not (didn't) work at the factory ten years ago. Tom's ältester Bruder arbeitete nicht vor zwei Jahren in der Fabrik.

Ժխտական ձևի կազմության նմանություն կա բաղադրյալ անվանական ստորոգյալների դեպքում, երբ not (nicht) ժխտական մասնիկը ավելանում է օժանդակ բային: Օրինակ՝ It was not (wasn't) cold yesterday. Es war nicht kalt gestern.

Հայերենում չ ժխտական մասնիկը կարող է ավելանալ և՛ ստորոգյալին, և՛ օժանդակ բային: Օրինակ՝ Երեկ ես նրան չտեսա: Երեկ ցուրտ չէր: Նա չէր աշխատում ֆաբրիկայում երկու տարի առաջ:

Present Perfect և Perfekt ժամանակաձևերում հարցական և ժխտական ձևերի կազմության մեջ նկատելի ընդհանրություններ կան: Հարցական ձևը կազմվում է have, haben կամ sein օժանդակ բայերի միջոցով, իսկ ժխտական ձևում not (nicht) ժխտական մասնիկները ավելանում են հենց նշված օժանդակ բայերին:

I have read this book. Have you read this book? I haven't read this book. Ich habe dieses Buch gelesen. Hast du dieses Buch gelesen? Ich habe dieses Buch nicht gelesen.

Այսպիսով, հայերեն, գերմաներեն և անգլերեն լեզուների զուգադրական վերլուծության արդյունքում հնարավոր է.

- Ի հայտ բերել անգլերենի բայական ժամանակաձևերին համապատասխանող ձևերը հայերենում և գերմաներենում, ինչպես նաև տարբերությունները՝ կապված իմաստի, կառուցվածքի, շարահասական առանձնահատկությունների հետ:

- Ենթադրություն կատարել բացասական ներթափանցման և դրական փոխադրման դաշտերի վերաբերյալ.

- Բացահայտել բայի կերպաժամանակային ձևերի այն գործածումները, որոնց յուրացման ընթացքում կարող է օգտագործվել նախօրոք ուսումնասիրված լեզուներից մեկը, այսինքն՝ իրականացնել տարբերակված մոտեցում նախկինում ձեռք բեված լեզվական փորձի նկատմամբ:

Չամենատական վերլուծությամբ հաջողվել է պարզաբանել համընկնող, մասնակի համընկնող և չհամընկնող հետևյալ երևույթները անգլերենում, հայերենում և գերմաներենում:

1. Համընկնող կառուցվածքներ, որոնք հեշտ են յուրացման համար.

ա. *To be* և *to have* բայերի գոյությունը երեք լեզուներում և նրանց խոնարհումը ներկա և անցյալ ժամանակներում:

բ. Անգլերենում և գերմաներենում հարցական ձևի կազմությունը *լինել* և *ունենալ* բայերի շրջում շարահասության միջոցով:

գ. Ժխտական ձևերի կազմության ընդհանրությունները երեք լեզուներում՝ *ժխտական մասնիկ և բայ*:

դ. Present Perfect-ի և Perfekt-ի կազմությունը անգլերենում և գերմաներենում՝ *have + Participle II*: Չայերենում նույնպես ունենք *հարակատար դերբայ + ունենալ* կառույցները (գլխավորապես խոսակցական լեզվում):

ե. Կանոնավոր և անկանոն բայերի գոյությունը անգլերենում և գերմաներենում:

զ. Անգլերենի *Past Indefinite*-ի և գերմաներենի *Präteritum*-ի իմաստային նույնակազմությունը:

է. Անգլերենի *Present Perfect*, գերմաներենի *Perfekt*, հայերենի *ներկա վաղակատար* ժամանակների իմաստային նույնակազմությունը երեք լեզուներում:

2. Մասնակի համընկնող ներթափանցող կառույցները.

Անգլերենի *Present Perfect* և գերմաներենի *Perfekt* ժամանակաձևերի կազմությունը: Բացի *haben+Partizip II* կառույցից, գերմաներենում գոյություն ունի նաև *sein + Partizip II* կառույցը:

3. Չհամընկնող փոխներթափանցվող կառույցներ, որոնց յուրացումը առավել մեծ դժվարություն են ներկայացնում.

Օրինակ՝ գերմաներենի *Perfekt*-ի կիրառումը անցյալ ժամանակի մակբայների հետ, անգլերենում ներմուծվող *did* օժանդակ բայի կիրառումը *Past Indefinite* ժամանակի հարցական ձևը կազմելու համար:

Չեն համընկնում *haben / sein+PartizipII* և *have+ Participle II* կառույցներում *Partizip II*-ի և *Participle II*-ի շարահյուսական դիրքը նախադասության մեջ: Զուգադրական վերլուծության արդյունքները հնարավորություն կընձեռեն կանխագուշակել լեզուների լեզվի դրական կամ բացասական փոխներգործման ոլորտները, ինչպես նաև տվյալ քերականական նյութի ուսուցման դժվարությունները: Զուգադրական վերլուծության արդյունքները պետք է հաշվի առնել լեզվական նյութը մեթոդապես կազմակերպելիս, ինչպես նաև վարժությունների համակարգը մշակելիս:

Գրականության ցանկ

1. Гак В. Г., Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка. ИЯШ. М.Изд-во "Просвещение".1979. N 3.
2. Гухман М.М., О единицах сопоставительно-типологического анализа грамматических систем родственных языков. "Структурно-типологическое описание современных германских языков". М. Изд-во "Наука".1966. С. 22-33.
3. Леонтьев А.А., Психолингвистические единицы и порождение речевого высказывания. М. Изд-во "Наука".1969.
4. Соловьева И.М., Элементарные единицы лексико-семантического описания в контрастивном анализе." Лингвистика и методика преподавания иностранных языков". М. Изд-во "Наука". 1976. С. 172-182
5. Ярцева В.Н., Типологическое исследование морфологических структур в родственных языках." Структурно-типологическое описание современных германских языков. М. Изд-во "Наука". 1966.